<ԳՅՈՒՄՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>
ՓԲԸ

ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ք. Գյումրի
2017թ - 2021թ

1.Ներածություն

<Գյումրիի թիվ 1 պոլիկլինիկա> ՓԲԸ-ն առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, իր գործունեությունը կանոնակարգում է ՀՀ հախագահի հրամանագրերով, ՀՀ վարչապետի որոշումներով, ՀՀ Շիրակի մարզպետի որոշումներով, <Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա>ՓԲԸ-ի ներքին կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով: Հանդիսանալով առողջապահական կազմակերպություն, կատարում է բնակչության առողջության պահպանմանը և բարելավմանը, ինչպես նաև հիվանդությունների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ և ապահովում է պետության կողմից երաշխավորված որակյալ, արդյունավետ և վերահսկվող բժշկական օգնություն:

1.Ընդհանուր տեղեկություններ բուժհիմնարկի վերաբերյալ	
Անվանումը	**<Գյումրիի թիվ 1 պոլիկլինիկա> ՓԲԸ**
Հասցե, հեռախոս	**Ք. Գյումրի, Շիրակացի 201, 0312-5-26-08, 0312-5-66-94**

1.1 Բուժհիմնարկի կողմից տրամադրվող ծառայությունների հակիրճ նկարագիրը

N	Իրականացվող բժշկական օգնության և սպասարկման տեսակները	Հայտանշված բժշկական օգնության և սպասարկման տեսակները	Լիցենզիաների համարները ու թույլատրված բուժօգնության և սպասարկման տեսակները
1	ԱԱՊ /մեկ բնակչի հաշվով/	Բժշկական ընդհանուր պրակտիկա	Կ-XX-000275 Բժշկական ընդհանուր պրակտիկա
2	Երեխաների ԱԱՊ /մեկ երեխայի հաշվով/	Մանկաբուժական ընդհանուր պրակտիկա	Կ-XX-000353 Մանկաբուժական ընդհանուր պրակտիկա
3	Սրտաբանական /մեծ.մանկ./	Սրտաբանական /մեծ.մանկ./	Կ-XX-000275 Կ-XX-000353 Սրտաբանական
4	Ստոմատոլոգիական /մեծ.մանկ./	Թերապևտիկ ստոմատոլոգիական	Կ-XX-000275 Թերապևտիկ ստոմատոլոգիական
5	Ինֆեկցիոն /մեծ./ իմունոլոգիական /մանկ./	Վարակիչ հիվանդություններ/մեծ./ Իմունոկանխարգելիչ /մանկ./	Կ-XX-000275 վարակիչ հիվանդություններ Կ-XX-000353 իմունոկանխարգելիչ
6	Վիրաբուժական /մեծ.մանկ./	Ընդհանուր վիրաբուժական /մեծ./ Ընդհանուր վիրաբուժական վնասվածքաբանական և օրթոպեդիա /մանկ./	Կ-XX-000275 ընդհանուր վիրաբուժական Կ-XX-000353 ընդհանուր վիրաբուժական վնասվածքաբանական և օրթոպեդիա
7	Ակնաբուժական /մեծ.մանկ./	Ակնաբուժական /մեծ.մանկ./	Կ-XX-000275 Կ-XX-000353 ակնաբուժական
8	Քիթ-կոկորդ-ականջաբանական/մեծ.մանկ./	Քիթ-կոկորդ-ականջաբանական /մեծ.մանկ./	Կ-XX-000275 Կ-XX-000353 քիթ-կոկորդ-ականջաբանական

9	Նյարդաբանական /մեծ.մանկ	Նյարդաբանական /մեծ.մանկ./	Կ-XX-000275 Կ-XX-000353 նյարդաբանական
10	Ներզատաբանական/մեծ./	Ներզատաբանական	Կ-XX-000275 ներզատաբանական
11	Մանկաբարձա-գինեկոլոգիական ընդհանուր պրակտիկա,այդ թվում հղիների նախածննդյան հսկողության և գինեկոլոգիական բուժօգնություն	Մանկաբարձա-գինեկոլոգիական ընդհանուր պրակտիկա,	Կ-XX-000712 մանկաբարձա-գինեկոլոգիական ընդհանուր պրակտիկա
12	Այլ նեղ մասնագիտական բուժօգնություն	Այլ նեղ մասնագիտական բուժօգնություն	Կ-XX-000275 ատամատոլոգիական
13	Տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետ	Տուբերկուլոզային	Կ-XX-001024 տուբերկուլոզային
14	Լաբորատոր-ախտորոշիչ հետազոտություններ -Ճառագայթային ախտորոշում/ռենտգեն/ -ֆլյուորոգրաֆիա -ֆունկցիոնալ ախտորոշում/ սոնոգրաֆիա, էլեկտրոսրտագիր/ -կլինիկական լաբորատոր հետազոտություններ -բիոքիմիական լաբ.հետազոտություններ սերոլոգիական խորխի հավաքման կետ	ճառագայթային ախտորոշիչ (ռենտգենաբանական, ֆլյուրոգրաֆիկ), ֆունկցիոնալ ախտորոշիչ(ԷՍԳ, ուլտրա ձայնային), լաբորատոր ախտորոշիչ(կլինիկական, բիոքիմիական)	Կ-XX-000275 ճառագայթային ախտորոշիչ (ռենտգենաբանական, ֆլյուրոգրաֆիկ), ֆունկցիոնալ ախտորոշիչ(ԷՍԳ, ուլտրա ձայնային), լաբորատոր ախտորոշիչ(կլինիկական, բիոքիմիական) N ճԱՕ-128-2007
15	Նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց բուժում,լաբորատոր գործիքային ախտորոշիչ հետազոտություններ և փորձաքննություն	Նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց բուժում,լաբորատոր գործիքային ախտորոշիչ հետազոտություններ	Կ-XX-000275
16	Ընտանեկան բժշկի գործառույթ/ ԱԱՊ /մեծ.մանկ./ Նեղ մասնագիտական լաբորատոր-ախտորոշիչ	Ընտանեկան բժշկություն	Կ-XX-000874 ընտանեկան բժշկություն

1.2 Շենքային պայմանները:

Իրավաբանական հասցեն – Շիրակացի 201 ,
Երկհարկանի քարաշեն շինություն է բաղկացած 2 մասնաշենքից, զբաղեցնում է 991.57ք մ. մակերես,: Շենքը կառուցված է 1924թ և գտնվում է <Կումայրի>արգելոց թանգարանի մեջ, պատկանում է քաղաքապետարանին և 1988թ-ից անշարժ գույքի վարձակալության պայմանագրի համաձայն պոլիկլինիկային ժամանակավոր տիրապետման և օգտագործմանն է հանձնվել: Շենքը խիստ կարիք ունի ընթացիկ և կապիտալ վերանորոգման:

Բուժհաստատությունը սպասարկում է պոլիկլինիկայում գրանցված 17637 ազգաբնակչություն,որից 1851մանկական, 15786 մեծահասակ ազգաբնակիչ:

Ընկերությունում աշխատողների թիվը կազմում է՝ 65 աշխատող /57,75 հաստիք/,որից բժիշկ թերապևտ-4,ընտանեկան բժիշկ-2,մանկաբույժ-1,նեղ մասնագետ-7,ստոմատոլոգ-1, լաբորատոր – գործիքային բաժնի բժիշկ-2, բուժքույր-34,վարչատնտեսական մաս -11, համատեղությամբ աշխատողներ -3, ներքին համատեղությամբ աշխատողներ – 8:

1.3 Ստորև ներկայացնում ենք աղյուսակ բուժհիմնարկի կադրային հագեցվածության վերաբերյալ

1.Բժիշկներ

Մասնագիտության նավանումը	Բժիշկ-մասնագետների պահանջվող հաստիքների քանակը ըստ մասնագիտությունների	Բժիշկ-մասնագետների զբաղեցրած հաստիքների քանակը ըստ մասնագիտությունների	Հաստիքները զբաղեցնող բժիշկ-մասնագետների թվաքանակը /ֆիզիկական անձերի թվաքանակը/	Վերջին հինգ տարվա կտրվածքով վերապատրաստում անցած բժիշկ-մասնագետների թիվը	Վերջին հինգ տարվա կտրվածքով վերապատրաստում չանցած բժիշկ-մասնագետների տոկոսային հարաբերությունը
Ընտանեկան բժիշկ	2,0	2,0	2	2	0%
Տեղամասային բժիշկ	4,0	4,0	4	4	0 %
Մանկաբույժ	1,0	1,0	1	1	0%
Դեռահասների բժիշկ	0,5	0,5	Ներքին համատեղություն		0%
Ուլտրաձայնային ախտորոշում	0,5	0,5	Ներքին համատեղություն		0%
Ռենտգեն բժիշկ	1,0	1,0	1	1	0%
Է.Ս.Գ բժիշկ	0,5	0,5	Ներքին համատեղություն		0%
Մանկաբարձ-գինեկոլոգ	2,0	2,0	2	2	0 %
Ֆիզիոթերապևտ	0,25	0,25	Ներքին համատեղությու		0%
Վիրաբույժ	0,5	0,5	1	1	0%
Ակնաբույժ	0,5	0,5	1	1	0%
Քիթ-կոկորդ-ականջաբան	0,5	0,5	1	1	0%
Բժիշկ ներզատաբան	0,5	0,5	1	1	0%
Բժիշկ Ինֆեկցիոնիստ	0,5	0,5	Ներքին համատեղություն		0%
Սրտաբան	0,5	0,5	1	1	0%
Նյարդաբան	0,5	0,5	1	1	0%
Բժիշկ Լաբորանտ	1,0	1,0	1	1	0%
Ստամատոլոգ	1.0	1.0	1	1	0%
Թոքային հիվանդությունների հայտնաբերման կաբինետի բժիշկ	0,5	0,5	1	1	0%
Ընդամենը	17.75	17.75	19	19	0%

2.Միջին բուժանձնակազմ

Մասնագիտության նավանումը	Միջին բուժանձնակազմի պահանջվող հաստիքների քանակը ըստ մասնագիտությունների	Միջին բուժանձնակազմի զբաղեցրած հաստիքների քանակը ըստ մասնագիտությունների	Հաստիքները զբաղեցնող միջին բուժանձնակազմի թվաքանակը /ֆիզիկական անձերի թվաքանակը/	Վերջին հինգ տարվա կտրվածքով վերապատրաստում անցած միջին բուժանձնակազմի թիվը	Վերջին հինգ տարվա կտրվածքով վերապատրաստում չանցած միջին բուժանձնակազմի տոկոսային հարաբերությունը
Ավագ բուժքույր	1,0	1,0	1	1	0%
Վիճակագիր	0,5	0,5	Ներքին համատեղություն	1	0%
Դեղագործ	1,0	1,0	1	1	0%
Ընտանեկան բուժքույր	2.0	2.0	2	2	0%
Տեղամասային բուժքույր	7.0	7.0	7	7	0%
Մանկաբուժական կաբինետի բուժքույր	1,0	1,0	1	1	0%
Դպրոցական բուժքույր	0.75,0	0.75	1	1	0%
Է.Ս.Գ կաբինետի բուժքույր	0,5	0,5	1	1	0%
Ուլտրաձայնային կաբինետի բուժքույր	0,5	0,5	1	1	0%
Բուժքույր-լաբորանտ	1,5	1,5	3	3	0%
Ռենտգեն-լաբորանտ	1,0	1,0	1	1	0%
Մանկաբարձուհի	2,0	2,0	2	2	0%
Ֆիզիոթերապևտիկ կաբինետի բուժքույր	0,5	0,5	1	1	0%
Սրտաբանական կաբինետի բուժքույր	0,5	0,5	1	1	0%
Նյարդաբանական կաբինետի բուժքույր	0,5	0,5	1	1	0%
Վիրաբուժական կաբինետի բուժքույր	0,5	0,5	1	1	0%
Ակնաբուժական կաբինետի բուժքույր	0,5	0,5	1	1	0%
Քիթ-կոկորդ-ականջաբանական կաբինետի բուժքույր	0,5	0,5	1	1	0%
Ներզատաբանական Կաբինետի բուժքույր	0,5	0,5	1	1	0%
Ինֆեկցիոն կաբինետի բուժքույր	0,5	0,5	Ներքին համատեղություն	1	0%
Բուժքույր ցուցակագիր	2,0	2,0	2	2	0%

Թոքային հիվանդությունների հայտնաբերման կաբինետի բուժքույր	0,5	0,5	1	1	0 %
Իմունոկանխարգելիչ կաբինետի բուժքույր	1,0	1,0	1	1	0%
Դեռահասների կաբինետի բուժքույր	0.5,0	0.5,0	Ներքին համատեղություն	1	0%
Ստոմատոլոգ բ/ք	1.0	1.0	1	1	
Ընդամենը	26.5	26.5	33	33	0 %

2.Զարգացման ռազմավարական նպատակը

Ընկերության նպատակն է առողջապահական համակարգի իրական պայմանների՝ պոլիկլինիկայի առկա կարողությունների հիման՝ ըստ բնակչության տարիքային և սեռային առկա խմբերի, ելնելով հիվանդացության միտումներից, ցուցաբերել ժամանակակից բժշկագիտությանը համապատասխան բուժօգնություն, ապացուցողական բժշկության սահմաններում մատուցել որակյալ ծառայություններ, արդյունքում պոլիկլինիկայի սպասարկման տարածքից դուրս ազգաբնակչությունը կնախընտրի տվյալ պոլիկլինիկան, որը կբերի բուժհիմնարկի եկամուտների ավելացմանը: Բուժօգնության որակի բարելավման միջոցների արդյունավետության ապահովման նպատակով դրանց նպատակաուղղումը բուժօգնության որակի բնորոշիչ կողմերի բարելավմանը, ինչպես նաև ընկերության նպատակը՝ տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումն է:
Իր առջև դրված նպատակները իրականացնելու համար ընկերությունը զբաղվում է գործունեության հետևյալ տեսակներով.
ա/ամբուլատոր- պոլիկլինիկական բժշկական օգնություն
բ/բժշկական վճարովի ծառայություններ

Ընկերության աշխատակիցները առաջնորդվում են մասագիտական կառավարում սկզբունքով, այն է՝ բուժօգնության գործառույթների պատշաճ իրականացումը,ղեկավարումը,կազմակերպումը և վերահսկումը:

2.1 Զարգացման պլան

1 Բուժօգնության մատչելիությունը /տեղեկատվական, աշխարհագրական/ապահովող միջոցառումներ
2. Ֆիզիկական միջավայրի /աշխատանքային պայմանների բարելավում-կապիտալ վերանորոգում, ֆիզիկական պայմանների անվտանգության ապահովում:
3. Մարդկային ռեսուրսների զարգացում և ուսուցում – Մասնագիտական կոմպետենտության բարձրացում, ապացուցողական բժշկությանը և սահմանված չափորոշիչներին բուժաշխատողների գործունեության համապատասխանություն:
4 Բուժհաստատության բուժօգնության և սպասարկման որակի կառավարման բարելավում
5. Կանխատեսվող ռիսկեր
6. Ֆինանսական կանխատեսում

1 Բուժօգնության մատչելիությունը /տեղեկատվական, աշխարհագրական/ապահովող միջոցառումներ

Հիմնավորում	Միջոցառումներ	Ֆինանսավորում
Տեղեկատվության և աշխարհագրական մատչելիության ապահովում, չնայած նրան, որ առաջնային բուժօգնությունը անվճար է ազգաբնակչության համար, շատերը տեղեկացված չեն այդ մասին	1. Համագործակցել ՀԼՄ-ների հետ, առողջապահական հարցերի վերաբերյալ, կրթական նյութերի առկայություն, որը կօգնի պացիենտին ճիշտ վարքագիծ և ապրելակերպ պահպանել, հուշաթերթերի առկայություն: 2. Բուժ հաստատությունում	Սեփական միջոցներով ապահովում

	տեսանելի տեղերում փակցնել ցուցանակներ, որտեղ կլինի տեղեկատվություն տարբեր ծառայությունների վայրը մատնանշող պարզաբանումներ բուժհաստատությունների և դեղորայքի անվճար տրամադրման վերաբերյալ: 3. Ակտիվացնել բժիշկների և բուժքույրերի ակտիվ այցերը՝ շարժունակության խնդիրներ ունեցող հաշմանդամներին, ծերերին:	Ֆինանսավորում չի պահանջում

2. Ֆիզիկական միջավայրի /աշխատանքային պայմանների բարելավում-կապիտալ վերանորոգում, ֆիզիկական պայմանների անվտանգության ապահովում:

Հիմնավորում	Միջոցառումներ	Ֆինանսավորում
1.Պոլիկլինիկայի շենքը ունի խիստ կապիտալ վերանորոգման կարիք՝ մասնավորապես ա/միջանցքների հատակը, պատուհանները, բ/տուբերկուլյոզի դեմ պայքարի կաբինետը իր տեղակայմամբ չի համապատասխանում ՀՀ ԱՆ 20.08.2008թ 21-Ն հրամանով ներկայացվող հիգենիկ պահանջներին	ա/միջանցքների հատակի վերանորոգում, պատուհանների փոխում բ/Համագործակցել ՏԱԾ-ի գրասենյակի հետ, քաղաքապետարանից ստանալ թույլտվություն այլ մուտք բացելու համար:	Սեփական միջոցներով և միաժամանակ ակնկալվում է դոնոր կազմակերպությունների ներգրավում
2. Բարոյապես և ֆիզիկապես մաշված ռենտգեն սարք, սոնոգրաֆիկ սարք, էսգ-ի ապարատ և այլ լաբորատոր սարքավորումներ	Ծրագիրը համաձայնեցնել հիմնադիրի հետ նախարարի կողմից սահմանված կարգին համապատասխան, նախարարին ներկայացնել հայտ՝ հաջորդ տարում առաջնահերթ համարվող բժշկական սարքավորման անվանացանկի վերաբերյալ	

3. Մարդկային ռեսուրսների զարգացում և ուսուցում – Մասնագիտական կոմպետենտության բարձրացում, ապացուցողական բժշկությանը և սահմանված չափորոշիչներին բուժաշխատողների գործունեության համապատասխանություն:

Նպատակը	Միջոցառումներ	Անցկացման տեղը, հաճախականությունը	Ֆինանսավորում
Օժանդակել բժիշկներին և բուժքույրերին ընդլայնել և ժամանակակից մակարդակի վրա պահել իրենց մասնագիտական գիտելիքները և հմտություններևը, դրանք ներդնելու	Շարունակական մասնագիտական կրթություն աշխատանքային տեղում, հրավիրվող մասնագետների կողմից՝ կարճատև սեմինարներ: Համապատասխան ուղեգրերի և գործելակարգերի	Բուժհիմնարկ, Շարունակական	Ֆինանսավորում չի պահանջում Սեփական միջոցների հաշվին

հնարավորություն	պատվիրում Վերապատրաստում արտերկրում	Արտերկիր	ՀՀ ԱՆ ուղեգրերով

4 Բուժհաստատության բուժօգնության և սպասարկման որակի կառավարման բարելավում

Բուժհաստատության կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները 2017թ պետք է ուղղված լինեն բուժհաստատության ներքին կառուցվածքի զարգացմանը, վճարովի ծառայությունների ծավալի աճին, **բուժօգնության** որակի **և** սպասարկման **կառավարման** բարելավմանը, ինչպես նաև ֆինանսական **մուտքերի** ավելացմանը, դրանց **թափանցելիությանը և վերահսկմանը**:

Ելնելով բուժհաստատության կառավարման բարելավման նպատակից, բուժհաստատության տնօրեմի կողմից ՀՀ Շիրակի մարզպետին և համապատասխան կառույցներին պարբերաբար պետք է ներկայացվեն բուժհաստառության խնդիրներից բխող առաջարկություններ և նախագծեր, ինչը միտված կլինի մասնավորապես բուժհաստատության շենքային և բուժաշխատողների աշխատանքային պայմանների բարելավմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի բուժօգնության սպասարկման որակի բարձրացմանը:

5. Կանխատեսվող ռիսկեր

Պոլիկլինիկայում 2017թ. –ին կանխատեսվում են հետևյալ ռիսկները

№	Գործառույթի նկարագիրը	Ռիսկի նկարագիր	Ռիսկի առաջացման հավանականության գնահատական	Ռիսկի տեղի ունենելու հետևանքով ազդեցության գնահատական
1.	Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություն	Սպասարկվող ազգաբնակչության ոչ բավարար թվի պատճառով ոչ օպտիմալ ֆինանսավորում	1	1
2.	Լաբորատոր – գործիքային ախտորոշիչ հետազոտություններ	Բժշկական սարքավորումների բարոյական և ֆիզիկական մաշվածություն	1	2
3.	Վճարովի բժշկական ծառայություններ	Վճարունակ բնակչության թվի նվազում	1	2

6. Ֆինանսական կանխատեսում

2017թվականի **համար կանխատեսվում է**	**98000.0հազ. դրամ եկամուտ,**
այդ թվում	
1/ Պետական ֆինանսավորմամբ /պետ.պատվեր/	95500.0հազ.դրամ
2/ Բուժ. սպասարկման դիմաց բնակչության կողմից վճարված /սեփական միջոցներ/	2500.0հազ.դրամ
2017թ.-ին կանխատեսվող ուղղակի ծախսերը կկազմեն -	97189.0 հազ դրամ
այդ թվում	
Հիմնական անձնակազմի աշխատանքի վարձատրության գումարը	80000.0 հազ դրամ

Պահանջվող նյութական ծախսերը /դեղորայք, վիրակապական նյութեր և այլ ԲՆԱ/	8272.0 հազ դրամ
Միջբուժհիմնարկային ծախսեր -	2000.0 հազ դրամ
Կոմունալ և կապի ծառայությունների վարձատրություն -	4027.0.0 հազ դրամ
Տնտեսական ծախսեր /գրասենյակային ապրանքներ, գույք, տրանսպորտային ծախսեր,ընթացիք տնտեսական նպատակների համար նյութեր և իրեր/ -	747.0 հազ դրամ
Գործուղումներ և ծառայողական ուղևորություններ -	470.0 հազ դրամ
Հարկեր տուրքեր -	960.0 հազ դրամ
Վարձակալական վճար -	403.0 հազ դրամ
Այլ ծախսեր այդ թվում չնախատեսված -	310.0 հազ դրամ

Ընդամենը 2017թ.-ի համար սպասվող շահույթ 811.0 հազ դրամ

Տնտեսական վիճակի բարելավման նպատակով 2017թ-2021թ շարունակելու է իրականացնել արդյունավետ պլանավորում, կառավարում և միաժամանակ խիստ վերահսկողություն, որի արդյունքում կանխատեսվում է հետևյալ ֆինանսատնտեսական ցուցանիշները

ՀՀ	Տարի	Ակնկալվող եկամուտ /հազ. դր/	Ծախսեր /հազ. դր/	Շահույթ /հազ. դր/	Շահույթի աճը տոկոսներով
1	2017թ	98000.0	97189.0	811.0	-
2	2018թ	100000.0	98800.0	1200.0	0.67
3	2019թ	105000.0	103600.0	1400.0	0.9
4	2020թ	108000.0	106200.0	1800.0	0.6
5	2021թ	112000.0	110000.0	2000.0	1.5

<Գյումրիի թիվ 1 պոլիկլինիկա> ՓԲԸ-ի տնօրեն՝ Մուքիասյան